ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 13-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հրամանի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերի:

3. Սույն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետը, 10-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերը, 12-րդ կետի 5-րդ ենթակետը, 13-րդ կետի 3-րդ ենթակետը, 17-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 38-րդ կետերը և 43-րդ կետի 23-րդ ենթակետն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի՝ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1816-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու օրը:

4. Սույն հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետի 7-րդ ենթակետը, 13-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը, 16-րդ կետը՝ Երևան քաղաքի ձերբակալվածներին պահելու վայրին և Երևան քաղաքի ուղեկցող գումարտակին վերաբերող կարգավորումների մասով, 27-րդ, 28-րդ, 34-րդ, 35-րդ և 37-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի

Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրը:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2022 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 3-Լ հրամանը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«14» 08 2024թ.

ք.Երևան

Հավելված
ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի
նախարարի տեղակալի 2024 թվականի
օգոստոսի 14-ի N 13-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) Նախարարության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) կենտրոնական ապարատի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Գլխավոր վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ, ներքին գործերի նախարարի, ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի (այսուհետ՝ Ոստիկանության պետ) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Գլխավոր վարչությունը ստեղծվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Գլխավոր վարչության աշխատակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքներով, ինչպես նաև Ոստիկանության պետի կողմից հաստատված տվյալ պաշտոնի անձնագրով:

5. Գլխավոր վարչության անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչություն,

2) ռուսերեն՝ Главное управление общинной полиции Полиции министерства внутренних дел Республики Армения,

3) անգլերեն՝ General Department of Community Policing of the Police of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,

4) ֆրանսերեն՝ Département Général de la Police Communautaire de la Police du Ministère des Affaires Intérieures de la République d'Arménie:

6. Գլխավոր վարչությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն և օտար լեզուներով անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Գլխավոր վարչութունը կարող է ունենալ խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7.Գլխավոր վարչության աշխատակիցները Ոստիկանության ծառայողներ, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք են:

8. Գլխավոր վարչության գտնվելու վայրերն են՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Նալբանդյան 130 և Ծովակալ Իսակովի պողոտա 9 հասցեները:

2. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Գլխավոր վարչության նպատակներն են՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը.

2) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը, խափանումը, հայտնաբերումը և բացահայտումը, հետախուզվողների հայտնաբերումը.

3) անչափահասների հանցավորության և ընտանիքում բռնության ոլորտում իրավախախտումների կանխարգելումը.

4) տրանսպորտային միջոցների շահագործման և ճանապարհային երթևեկության անվտանգության պահպանման որակի բարձրացումը.

5) հանցագործությունների և վարչական իրավախախտումների դեմ պայքարի գործում պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը, ինչպես նաև ոստիկանության նկատմամբ վստահության ձևավորումը և գործունեության հրապարակայնության ապահովումը:

10. Գլխավոր վարչության խնդիրներն են՝ ապահովել՝

1) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը, խափանումը, բացահայտումը, ինչպես նաև հետախուզվող անձանց հայտնաբերումը.

2) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենսդրության, ճանապարհային երթևեկության կանոնների և տեխնիկական նորմերի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը և վարչական վարույթի իրականացումը.

3) վարչարարության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների իրացումը.

4) հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների, բեռների և այլ շարասյուների ուղեկցումը.

5) կարանտին հայտարարված տարածքներում հակահամաճարակային միջոցառումների իրականացումը.

6) անչափահասների հանցավորության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը.

7) ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցումը և պահման կանոնների պատշաճ պահպանումը.

8) զենքի և զինամթերքի շրջանառության վերահսկողությունը, թույլտվությունների տրամադրումը:

3. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. Գլխավոր վարչությունը կազմված է կառուցվածքային և ենթակա ստորաբաժանումներից:

12. Գլխավոր վարչության կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) հսկողության վարչությունը.

2) օպերատիվ-վերլուծական վարչությունը.

3) մասնագիտական մեթոդական աջակցման վարչությունը.

4) հերթապահ ծառայության վարչությունը.

5) վարչական գործունեության և բողոքների քննության վարչությունը:

13. Գլխավոր վարչության ենթակա ստորաբաժանումներն են՝

1) առանձին ոստիկանության կարանտին վաշտը.

2) հատուկ նշանակության գումարտակը.

3) ուղեկցող սպայական վաշտը.

4) Գլխավոր վարչության ենթակա տարածքային ու գծային ստորաբաժանումները:

14. Օպերատիվ-վերլուծական վարչությունը բաղկացած է օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեաբանական վերլուծության բաժիններից:

15. Մասնագիտական մեթոդական աջակցման վարչությունը բաղկացած է անչափահասների հետ տարվող աշխատանքների գծով մեթոդական և ընտանեկան բռնության կանխարգելման աշխատանքների գծով մեթոդական բաժիններից:

16. Հերթապահ ծառայության վարչությունը բաղկացած է թույլտվության և մեթոդական ապահովման, ձերբակալվածներին պահելու վայրերի և ուղեկցող ստորաբաժանումների աշխատանքների իրականացման և համակարգման բաժիններից, պարետային ծառայությունից (բաժնի իրավունքով), հերթապահ մասից (բաժնի իրավունքով), Երևան քաղաքի ձերբակալվածներին պահելու վայրից (բաժնի իրավունքով) և Երևան քաղաքի ուղեկցող գումարտակից:

17. Վարչական գործունեության և բողոքների քննության վարչությունը բաղկացած է տեխնիկական միջոցներով հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության, ճանապարհային երթևեկության կազմակերպման, մոնիթորինգի և հսկողության, վարչական բողոքների քննության, դատական պաշտպանության և վարչական ակտերի կատարումն ապահովող բաժիններից:

4. ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

18. Գլխավոր վարչության հսկողության վարչության գործառույթներն են՝

1) համայնքային ոստիկանության գործունեության նկատմամբ հսկողությունը, մշտադիտարկումը և սահմանված չափորոշիչների հիման վրա աշխատանքների գնահատումը,

2) հսկողության, մշտադիտարկման և գնահատման արդյունքներով ծառայողների բարեվարքության և համայնքային ոստիկանության գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակումը.

3) համայնքային ոստիկանության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ առաջարկների ներկայացումը.

4) համայնքային ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտումների հայտնաբերումը.

5) համայնքային ոստիկանության ծառայողների կողմից ենթադրյալ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ ստացված դիմումների, բողոքների նախնական ուսումնասիրությունը, դրանց հետագա ընթացքի ապահովումը.

6) կարգապահական խախտումներ, էթիկայի և վարքագծի նորմերի խախտումներ, ծառայության իրականացման թերացումներ հայտնաբերելու դեպքում տեղեկատվության տրամադրումը Նախարարության իրավասու ստորաբաժանմանը.

7) համայնքային ոստիկանության գործունեության իրականացման մշտադիտարկումը տեղեկատվական ու տեխնիկական համակարգերի, այդ թվում՝ պլանավորված կամ հանկարծակի ստուգումների միջոցով.

8) առանձին ուղղություններով իրականացվող միջոցառումների կազմակերպումը, համակարգումը և վերահսկումը, ինչպես նաև արդյունքների ամփոփումը.

9) համայնքային ոստիկանության տարածքային և գծային ստորաբաժանումների և այլ պետական մարմինների միջև համագործակցության ապահովումը.

10) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

19. Գլխավոր վարչության օպերատիվ-վերլուծական վարչության օպերատիվ-հետախուզական գործունեության բաժնի գործառույթներն են՝

1) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման, ինչպես նաև հետախուզական աշխատանքների համակարգումը.

2) օպերատիվ հաշվառման գործերի կազմումը և վարումը.

3) համագործակցող անձանց հավաքագրումը, հավաքագրման աշխատանքների համակարգումը և դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեթոդաբանության մշակումը.

4) չբացահայտված ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքերով ամենօրյա ռեժիմով տեղեկությունների հավաքումը և ամփոփումը.

5) համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կատարված հանցագործությունների բացահայտման աշխատանքներում համագործակցության ապահովումը քրեական ոստիկանության գլխավոր վարչության իրավասու ստորաբաժանումների հետ.

6) օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման արդյունավետության բարձրացմանը միտված միջոցառումների իրականացումը.

7) համայնքային ոստիկանության և քրեական ոստիկանության գլխավոր վարչության միջև ամենօրյա համագործակցության ապահովումը.

8) ըստ անհրաժեշտության հանցավորության հայտնաբերմանն ու բացահայտմանը միտված միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

9) համայնքային ոստիկանության կողմից օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման որակը բարձրացնելու ուղղությամբ առաջարկների ներկայացումը.

10) տարածքային և գծային ստորաբաժանումներին օպերատիվ-հետախուզական գործունեության ուղղությամբ մեթոդական և գործնական աջակցության ցուցաբերումը.

11) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

20. Գլխավոր վարչության օպերատիվ-վերլուծական վարչության քրեաբանական վերլուծության բաժնի գործառույթներն են՝

1) համայնքային ոստիկանության օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների վերլուծությունը, հաշվետվությունների կազմումը, ղեկավարությանն առաջարկների ներկայացումը.

2) Ոստիկանության ղեկավարության կողմից անցկացվող խորհրդակցությունների համար Գլխավոր վարչության իրավասությանը վերաբերելի նյութերի տրամադրումը, դրանց արձանագրումը, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողությունը.

3) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների քրեաբանական վերլուծությունը, դրանք ծնող պայմանների և պատճառների հայտնաբերումը.

4) վարչական իրավախախտումների հաշվառումը, վերլուծությունը, առաջարկությունների ներկայացումը.

5) Գլխավոր վարչության գործունեության պլանավորման աշխատանքների իրականացումը, պլանային միջոցառումների ու հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողությունը.

6) Գլխավոր վարչության հաստիքների համալրվածության մշտադիտարկումը և վերլուծումը.

7) համայնքային ոստիկանության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի, միջոցառումների ծրագրերի մշակումը, ինչպես նաև ռազմավարությունների մշակման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը, ամփոփումն ու տրամադրումը Նախարարության իրավասու ստորաբաժանմանը.

8) տարածքային և գծային ստորաբաժանումների կողմից գրանցված հանցագործությունների դեպքերով վիճակագրական քարտերը սահմանված կարգով քննչական մարմիններից ստանալու, հաշվառելու, լրացնելու և ինֆորմացիոն կենտրոն ներկայացնելու գործընթացի նկատմամբ հսկողության իրականացումը.

9) համայնքային ոստիկանության տարածքային մարմիններին վերլուծական աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ մեթոդական աջակցության ցուցաբերումը.

10) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

21. Գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության ընտանեկան բռնության կանխարգելման աշխատանքների գծով մեթոդական բաժնի գործառույթներն են՝

1) նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական և էլեկտրոնային ձեռնաշղթաների կիրառման որոշումների վիճակագրության վարումը, կրկնման և խախտման դեպքերի ուսումնասիրությունը.

2) պաշտպանության միջոցների կիրառման ընթացքում ծագող իրավական, կազմակերպչական, մասնագիտական խնդիրների վերհանումը և դրանց լուծման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

3) նախազգուշացման, անհետաձգելի միջամտության և էլեկտրոնային ձեռնաշղթաների կիրառման որոշումների դիմում-բողոքների հաշվառումը, ուսումնասիրումը, բողոքարկման վարույթի իրականացումը.

4) պաշտպանության միջոցների կիրառման խախտումներ հայտնաբերելու դեպքում տեղեկատվության ներկայացումը Նախարարության իրավասու ստորաբաժանմանը.

5) տարածքային և գծային ստորաբաժանումներին ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ուղղությամբ մասնագիտական և մեթոդական աջակցության ցուցաբերումը.

6) նախազգուշացման, անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների բողոքարկման դիմումների և բողոքարկման վարույթների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը.

7) բռնություն գործադրած անձանց քարտային միասնական հաշվառումը.

8) կրկնվող ընտանեկան բռնության դեպքերի մշտադիտարկումը.

9) կրկնվող ընտանեկան բռնության դեպքերով հաշվառման քարտերի ուսումնասիրությունը և թերությունների վերացման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

10) ընտանեկան բռնության արձանագրված փաստերի, ավարտված վարույթների, բռնության կրկնման և խախտման, բռնություն գործադրած, ինչպես նաև էլեկտրոնային ձեռնաշղթաներ կիրառված անձանց վերաբերյալ հաշվետվությունների կազմումը.

11) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, միջազգային փորձի ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը.

12) ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ուղղությամբ ծառայողների համար դասընթացների կազմակերպումը և ստուգարքների ընդունումը.

13) ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

14) ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կանխարգելման նպատակով զանգվածային լրատվության միջոցներին տեղեկատվության տրամադրումը.

15) էլեկտրոնային ձեռնաշղթաների կիրառման կենտրոնացված հաշվառումը.

16) էլեկտրոնային ձեռնաշղթաների կիրառման գործընթացի մշտադիտարկումը, առկա խնդիրների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

17) էլեկտրոնային ձեռնաշղթաների կիրառման ոլորտում համագործակցության ապահովումն այլ իրավապահ մարմինների հետ.

18) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

22. Գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության անչափահասների հետ տարվող աշխատանքների գծով մեթոդական բաժնի գործառույթներն են՝

1) անչափահասների հանցավորության կանխարգելման աշխատանքների համակարգումը, ուսումնասիրությունը և ոլորտի արդյունավետության բարձրացման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

2) անչափահասների հանցավորության կանխարգելման ոլորտին առընչվող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

3) անչափահասների հանցավորության կանխարգելման ուղղությամբ ծրագրերի, միջոցառումների մշակումը և իրականացման ապահովումը.

4) անչափահասների հանցավորության կանխարգելման աշխատանքների մշտադիտարկումը, տեղեկությունների հավաքումը, վերլուծությունը և հաշվետվությունների կազմումը.

5) հաշվառման մեջ գտնվող անչափահասների միասնական հաշվառումը.

6) անչափահասի վրա բացասական ազդեցություն ունեցող ծնողի կամ օրինական ներկայացուցիչների միասնական հաշվառումը.

7) հաշվառման մեջ գտնվող անչափահասների կողմից հակահիրավական վարքագծի կրկին դրսևորման դեպքերում պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) քարտերի ուսումնասիրումը.

8) անչափահասների հանցավորության կանխարգելման ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների միջև համագործակցության ապահովումը.

9) ոլորտին վերաբերող դիմումների և բողոքների սահմանված կարգով քննարկումը՝ բացառությամբ վերադասության կարգով վարչական բողոքներով վարույթների իրականացմանը.

10) այլ երկրների քաղաքացիների կողմից երեխաների որդեգրման վերաբերյալ ստացված փաստաթղթերի ուսումնասիրումը.

11) անչափահասների հանցավորության կանխարգելման ուղղությամբ գործնական և մեթոդական աջակցության ցուցաբերումը.

12) հանցավորության կանխարգելման ուղղությամբ անչափահասների շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով միջոցառումների իրականացումը.

13) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

23. Գլխավոր վարչության հերթապահ ծառայության թույլտվության և մեթոդական ապահովման բաժնի գործառույթներն են՝

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց քաղաքացիական զենքերի և փամփուշտների ձեռքբերման, պահման և կրման թույլտվությունների տրամադրումը, ժամկետների երկարաձգումը.

2) քաղաքացիներին պատկանող զենքերը մալելու գործընթացի ապահովումը և թույլտվության տրամադրումը.

3) պարգևատրական զենքերի հաշվառումը, պահելու և կրելու թույլտվության տրամադրումը.

4) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող և զենքի առևտրով զբաղվող իրավաբանական անձանց, սպորտային և մասնավոր պահնորդական կազմակերպությունների, քաղաքացիական հրաձգարանների կողմից զենքերի ձեռքբերման և զետեղարանների թույլտվությունների տրամադրումը, դրանց ժամկետների երկարաձգումը, զետեղարանների ստուգումը, զենք ամրակցված անձանցից ստուգարքների ընդունումը, զենք պահելու և օգտագործելու թույլտվության տրամադրումը, ժամկետների երկարաձգումը.

5) հրաձգության հրահանգչի որակավորման ստուգարքների ընդունումը, վկայականների տրամադրումը.

6) առաջին անգամ զենք ձեռք բերելիս քաղաքացիների տեսական և գործնական քննությունների կազմակերպումը և վերահսկողությունը.

7) միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական զենքերի թույլտվությունների տրամադրումը, ժամկետների երկարաձգումը.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից զենքերի և զինամթերքի ներկրման ու արտահանման եզրակացությունների տրամադրումը.

9) զենքի շրջանառությանը վերաբերող դիմումների քննարկումը և տեղեկատվության տրամադրումը.

10) զենք և փամփուշտներ ունեցող օբյեկտների զետեղարանների կիսամյակային ստուգումների իրականացումը.

11) զենքերի հաշվառման միասնական շտեմարանի վարումը.

12) տարածքային ստորաբաժանումների թույլտվության համակարգի ծառայողների աշխատանքների համակարգումը և մեթոդական աջակցության ցուցաբերումը.

13) ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակումը, դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

14) սահմանված կարգով և դեպքերում միջազգային կազմակերպությունների հետ փոխգործակցությունը.

15) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

24. Գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության պարետային ծառայության գործառույթներն են՝

1) Նախարարության վարչական շենքերի պահպանությունը (պաշտպանությունը).

2) Նախարարության վարչական շենքերում անցագրային ռեժիմի ապահովումը.

3) Նախարարություն դիմած քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը և ըստ իրավասության ուղղորդումը.

4) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

25. Գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության հերթապահ մասի գործառույթներն են՝

1) հերթապահ մասում շուրջօրյա հերթափոխով ծառայության կազմակերպումը.

2) հեռախոսակապով ստացված տեղեկությունների ընդունումը և փոխանցումը ըստ ենթակայության.

3) սպառազինության պահման սենյակում գտնվող հաշվեցուցակային զենքերի և հատուկ միջոցների հաշվառումը, հաշվառումից հանումը և պահպանությունը, ծառայողներին զենքերի և հատուկ միջոցների տրամադրումը.

4) սպառազինության պահման սենյակում պահվող հատուկ միջոցառումների պլանների պահպանությունը, գործարկումը և անձնակազմի հավաքի կազմակերպումը.

5) ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերում ուսումնասիրությունների անցկացումը և գործնական ու մեթոդական աջակցության ցուցաբերումը.

6) ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը.

7) ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հերթապահ մասերում վարվող գրանցամատյանների, մատյանների և ձևաթղթերի ապահովումը և դրանց վարման նկատմամբ հսկողության իրականացումը.

8) ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

9) համայնքային ոստիկանության տարածքային և գծային ստորաբաժանումների հերթապահ մասերի գործունեության մշտադիտարկումը.

10) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

26. Գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության ձերբակալվածներին պահելու վայրերի և ուղեկցող ստորաբաժանումների աշխատանքների իրականացման և համակարգման բաժնի գործառույթներն են՝

1) ձերբակալվածներին ու կալանավորվածներին ընդունելու և պահելու ընթացքում ձերբակալվածներին պահելու վայրերի (այսուհետ՝ ՁՊՎ) ներքին կանոնակարգի պահանջների կատարման ապահովումը.

2) ՁՊՎ-ի և ուղեկցող ստորաբաժանումների գործունեության ուղղությամբ գործնական և մեթոդական աջակցության ցուցաբերումը.

3) ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի հետ համագործակցությունը.

4) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների և ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից ՁՊՎ-ներ այցելությունների արդյունքում կազմված զեկույցների, տեղեկանքների և հաշվետվությունների քննարկումը, պարզաբանումների ներկայացումը.

5) ՁՊՎ-ներում և ուղեկցող ստորաբաժանումների գրանցամատյանների, մատյանների և ձևաթղթերի վարման կարգի ապահովումը.

6) ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սնունդ մատակարարելու համար իրավասու ստորաբաժանումներին անհրաժեշտ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ներկայացումը.

7) ՁՊՎ-ների և ուղեկցող ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և հաշվետվությունների կազմումը.

8) ՁՊՎ-ների և ուղեկցող ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

9) ուղեկցող ստորաբաժանումների ուղեկցման երթուղիների, տեղադիրների ուսումնասիրությունը և համաձայնության ներկայացումը.

10) հատուկ իրավիճակներով պայմանավորված՝ երթուղիների փոփոխության և ուղեկցող ստորաբաժանումների փոխօգնության հնարավորության ուսումնասիրությունը և դրանց կազմակերպումը.

11) նյութատեխնիկական հագեցվածության ուսումնասիրությունը, կարիքների գնահատումը և միջնորդությունների ներկայացումն իրավասու ստորաբաժանումներին.

12) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

27. Գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության Երևան քաղաքի ուղեկցող գումարտակի գործառույթներն են՝

1) ձերբակալված կամ կալանավորված անձանց ուղեկցման հիմնական և լրացուցիչ երթուղիների մշակումը և տեղադիրի կազմումը.

2) ձերբակալված կամ կալանավորված անձանց ուղեկցումը պատշաճ կազմակերպելու նպատակով, մինչև դատարանը սպասարկման ընդունելը, դատարանի իրավասու աշխատակցի հետ համատեղ շենքային պայմանների հետազոտումը և ակտերի կազմումը: Անհրաժեշտ պայմանների բացակայության դեպքում դատարանին թերությունների վերացման առաջարկության ներկայացումը.

3) ձերբակալված կամ կալանավորված անձանց ՁՊՎ-ներ, քրեակատարողական հիմնարկներ, փորձաքննությունների կենտրոններ, բժշկական հաստատություններ, ինչպես նաև դատական նիստերի, ապացուցողական և վարույթային այլ գործողությունների ուղեկցումը և պահպանումը.

4) ուղեկցման ընթացքում ձերբակալված կամ կալանավորված անձանց անվտանգության ապահովումը և անհրաժեշտության դեպքում առաջին բժշկական օգնության ցուցաբերումը.

5) սահմանված կարգով ձերբակալված կամ կալանավորված անձանց անձնական խուզարկության կատարումը, իրերի զննությունը և հանցագործության մասին վկայող իրեր, առարկաներ հայտնաբերելու դեպքում դրանց առգրավվումը և վարույթն իրականացնող մարմնին փոխանցումը.

6) ուղեկցման ընթացքում ձերբակալված կամ կալանավորված անձանց մեկուսացման ռեժիմի համար սահմանված պայմանների ապահովումը.

7) ձերբակալված կամ կալանավորված անձանց կողմից ուղեկցման ընթացքում փախուստի, ինքնասպանության, ինքնավնասման, ոստիկանության ծառայողի օրինական

պահանջը չկատարելու, դիմադրություն ցույց տալու, պահակախմբի և ուղեկցողի վրա հարձակման փորձերի կանխարգելումը, կանխումը և խափանումը.

8) պահակախմբի կամ ուղեկցողի վրա ուղեկցման և պահպանման ընթացում հարձակման փորձ կատարած անձանց ձերբակալումը.

9) ուղեկցման ընթացքում տրանսպորտային միջոցը հսկողության տակ պահելը, սարքինության վիճակի և երթևեկության անվտանգության ապահովումը.

10) ուղեկցումների և պահպանման վերաբերյալ հաշվետվությունների կազմումը և իրավասու ստորաբաժանում ներկայացումը.

11) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

28. Գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության Երևան քաղաքի ՁՊՎ-ի գործառույթներն են՝

1) սահմանված կարգով ձերբակալված և կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելը, պահելը և այլ վայրեր փոխադրելու համար պահակախմբին հանձնելը.

2) ՁՊՎ-ում ներքին անվտանգության ապահովումը.

3) ձերբակալված և կալանավորված անձանց մեկուսացման, նրանց իրավունքների և ազատությունների պաշտպանության, պարտականությունների պատշաճ կատարման և անվտանգության ապահովումը.

4) ձերբակալված և կալանավորված անձանց փախուստի և խմբակային անկարգությունների կանխումը՝ պահվող անձանց կյանքի ու առողջության հնարավոր պահպանմամբ.

5) արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը ՁՊՎ բացառելու նպատակով՝ ձերբակալված և կալանավորված անձանց անձնական խուզարկության իրականացումը.

6) հանցագործության մասին վկայող իրեր, առարկաներ հայտնաբերելու դեպքում դրանց առգրավումը և փոխանցումը վարույթն իրականացնող մարմնին.

7) ձերբակալված և կալանավորված անձի՝ պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ սահմանված կարգով տեսակցության ապահովումը.

8) ձերբակալված և կալանավորված անձանց սահմանված կարգով զբոսանքի կազմակերպումը.

9) ձերբակալված և կալանավորված անձանց կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ սահմանված կարգով ապահովելը.

10) ձերբակալված կամ կալանավորված անձի առաջարկությունների, դիմումների և բողոքների ընդունումը, սահմանված կարգով ընթացք տալը կամ քննություն իրականացնելու իրավասություն ունեցող ստորաբաժանմանը փոխանցելը.

11) ձերբակալված և կալանավորված անձանց նյութակենցաղային պայմանների ապահովումը.

12) ձերբակալված և կալանավորված անձանց սննդամթերքով և անհրաժեշտ առարկաներով ապահովելը.

13) ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը, առաջին բժշկական օգնության ցուցաբերումը.

14) ձերբակալված և կալանավորված անձանց սահմանված կարգով քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցության ապահովումը.

15) ՁՊՎ-ում կանանց և անչափահասների համար սահմանված առանձնահատկությունների ապահովումը.

16) ապացուցողական գործողություններ, ինչպես նաև ամբուլատոր դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու համար ՁՊՎ-ի տարածքում համապատասխան տարածքների կամ շինությունների տրամադրումը.

17) ՁՊՎ ընդունած անձանց անձնական գործի կազմումը և վարումը.

18) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

29. Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության դատական պաշտպանության բաժնի գործառույթներն են՝

1) Գլխավոր վարչության համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների գործողությունների, անգործության, վարչական ակտերի դեմ ներկայացված հայցերով, ինչպես նաև Գլխավոր վարչության շահերի պաշտպանության նպատակով դատական ներկայացուցչության ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների և դատական պրակտիկայի հիման վրա վարչության համակարգում գտնվող ստորաբաժանումներին խորհրդատվության տրամադրումը.

3) Գլխավոր վարչությանը հասցեագրված դատական ակտերի ուսումնասիրությունը, հաշվառումը, վերլուծությունը և դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացումը.

4) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

30. Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության վարչական բողոքների քննության բաժնի գործառույթներն են՝

1) Գլխավոր վարչության համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների գործողությունների, անգործության, վարչական ակտերի դեմ բերված վարչական բողոքներով բողոքարկման վարույթի իրականացումը՝ բացառությամբ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով բողոքարկման վարույթների.

2) չբողոքարկված վարչական ակտերի՝ վերադասության կարգով վերանայման վարույթի իրականացումը՝ բացառությամբ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով վարույթների.

3) վարչական բողոքների, ինչպես նաև բողոքարկման և վերադասության կարգով վերանայման վարույթների արդյունքների հաշվառումը, բացառությամբ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով բողոքարկման վարույթների.

4) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

31. Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության վարչական ակտերի կատարումն ապահովող բաժնի գործառույթներն են՝

1) Գլխավոր վարչության համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների մշտադիտարկումը, մեթոդական օգնության ցուցաբերումը և կայացրած վարչական ակտերի կատարման ապահովումը.

2) վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլ տրվող, կրկնվող թերությունները վերացնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

3) վարչական ակտերի հարկադիր կատարման նկատմամբ հսկողության իրականացումը.

4) վարչական ակտերի վճարումների նույնականացումը և դիմումների հիման վրա վճարումների տեղափոխումը այլ վարչական ակտերի.

5) վարչական ակտերի հարկադիր կատարումից հրաժարվելու՝ ներառյալ հարկադիր կատարման չուղարկված վարչական ակտերի կատարումը դադարեցնելու գործընթացի իրականացումը.

6) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված որոշումների հաշվառումը.

7) դատական պաշտպանության բաժնից ներկայացված զեկուցագրի հիման վրա տեղեկանքների տրամադրումը՝ սնանկ ճանաչված անձի նկատմամբ Գլխավոր վարչության ծառայողների կողմից կայացված վարչական ակտերի հիմքով առաջացած և չկատարված պարտավորությունների վերաբերյալ.

8) համաձայն «Ճանապարհային երթևեկության կանոնների վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների փոխադարձ ճանաչման և կատարման մասին» կոնվենցիայի՝ պայմանավորվող կողմ երկրների կողմից ուղարկված իրավասու մարմինների կայացված զրկման որոշումների կատարումը.

9) Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից կայացված տրանսպորտային միջոցների վարելու իրավունքից զրկման ձևով պատիժների կատարման ապահովումը.

10) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից ուղարկված դատարանի վճիռներով զրկումների կատարումը՝ վարչական իրավախախտումների էլեկտրոնային շտեմարանում մուտքագրելու միջոցով.

11) տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելու դեպք հայտնաբերվելու դեպքում իրավասու մարմիններին համապատասխան նյութերի տրամադրումը.

12) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

32. Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության վարչության ճանապարհային երթևեկության կազմակերպման, մոնիթորինգի և հսկողության բաժնի գործառույթներն են՝

1) ճանապարհային երթևեկության կազմակերպման, տեխնիկական միջոցների տեղադրման և շահագործման աշխատանքների համար նախատեսված պահանջների պահպանման, ինչպես նաև ճանապարհները և դրանց ինժեներական կառույցները, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները տեխնիկական նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու նկատմամբ հսկողության իրականացումը, հայտնաբերված խախտումների վերացման պահանջների ներկայացումը.

2) ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների կառուցման, վերակառուցման, վերանորոգման ու պահպանման նախագծերի, ինչպես նաև ճանապարհամերձ օբյեկտների տեղաբաշխման ժամանակ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհային աշխատանքների կատարման ժամանակ երթևեկության կազմակերպման սխեմաների համաձայնեցումը.

3) փողոցներում և ճանապարհներին կատարվող շինարարական, վերակառուցման, վերանորոգման և այլ աշխատանքները, ինչպես նաև տրանսպորտի երթևեկության սահմանափակումը կամ արգելումը.

4) ճանապարհների կահավորման և ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաների, փաստաթղթերի ուսումնասիրությունը, համաձայնությունը, հսկողությունը ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի նկատմամբ.

5) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում իրավախախտում ամրագրող տեխնիկական միջոցներ տեղակայելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

6) բեռնատար ավտոմոբիլների համար երթևեկությունն արգելված փողոցներում ժամանակավոր թույլտվության տրամադրումը.

7) սահմանված կարգով ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով բեռների փոխադրումները՝ ավտոճանապարհներով իրականացնելու թույլատրող հատուկ անցագրերի տրամադրումը.

8) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդների տեղադրման համաձայնեցումը.

9) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը.

10) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն առընչվող՝ օրենքով չարգելված տեղեկություններ հրապարակելը.

11) վարչական բողոքների քննության բաժնից համապատասխան հարցման հիման վրա, իրավախախտումն արձանագրված վայրի մասին երթևեկության կազմակերպման վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը.

12) ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության կազմակերպման մոնիթորինգի, սեզոնային հետազոտությունների իրականացումը.

13) ճանապարհատրանսպորտային պատահարների կուտակման վայրերի վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը.

14) ճանապարհի վիճակի և տեխնիկական հագեցվածության հետ կապված վարչական իրավախախտումների գործերի քննությունը.

15) երթևեկության ժամանակավոր թույլտվության անցագրերի հատկացումը.

16) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

33. Գլխավոր վարչության վարչական գործունեության և բողոքների քննության տեխնիկական միջոցներով հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի գործառույթներն են՝

1) տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով (այդ թվում՝ բջջային հավելվածի միջոցով) վարչական վարույթի իրականացումը, վարչական տույժ նշանակելու մասին որոշումների կայացումը.

2) իրավախախտման հատկանիշների կասկած հարուցելու դեպքում վարչական տույժ նշանակելու մասին որոշման կայացման մերժումը.

3) խախտումն այլ անձի կողմից կատարելու վերաբերյալ ներկայացված ապացույցների հիման վրա վարչական վարույթի իրականացումը, իրավախախտում կատարած անձի վերաբերյալ նոր որոշման կայացումը.

4) անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային հարթակում տրանսպորտային միջոցը շահագործող անձի տվյալների կցումը և լիազորությունների դադարեցումը.

5) տուգանային միավորների համակարգի կիրառման ապահովումը, ինչպես նաև 9 և ավելի տուգանային միավոր ունեցող անձանց վարորդական իրավունքը կասեցնելու, այդ իրավունքից զրկելուն ուղղված վարչարարությունը.

6) ԱՊՊԱ կենտրոնական բյուրոյի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա վարչական վարույթի իրականացումը՝ ուղղված ավելի քան 10 օր ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար տրանսպորտային միջոցների սեփականատերերին վարչական պատասխանատվության ենթարկելուն, վարչական տույժ նշանակելու մասին որոշումների կայացումը.

7) կասեցված կամ զրկված վարորդական իրավունքով տրասպորտային միջոց վարելու փաստ հայտնաբերելու դեպքում համապատասխան նյութերի նախապատրաստումը և իրավասու պետական մարմին ուղարկելը.

8) կասեցված կամ զրկված վարորդական իրավունքով տրասպորտային միջոց վարելու փաստով իրավասու մարմիններ ուղարկված նյութերի հաշվառումը.

9) կասեցված կամ զրկված վարորդական իրավունքով տրասպորտային միջոց վարելու փաստով հարուցված քրեական վարույթի շրջանակներում համագործակցությունը նախաքննական մարմինների հետ.

10) լուսանկարահանող և տեսանկարահանող սարքեր տեղադրելու վերաբերյալ առաջարկների ներկայացումը.

11) ոստիկանության, հետաքննության և նախաքննության մարմինների, ապահովագրական ընկերությունների հարցումների հիման վրա տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով ամրագրված տեսանյութերի և լուսանկարների տրամադրումը.

12) «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հայտնաբերման գործընթացի նկատմամբ հսկողությունը, սարքերի տեղադրման կամ տեղափոխման վերաբերյալ հանձնարարականներ տալը.

13) ծրագրային ապահովումն իրականացնող ստորաբաժանման հետ համագործակցությունը, համակարգը բարելավելու, հայտնաբերված թերությունները շտկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, անհրաժեշտության դեպքում տեղեկատվական շտեմարաններում փոփոխություններ և ուղղումներ կատարելու օժանդակումը.

14) փոստային ծառայություն մատուցող կազմակերպության հետ համագործակցության ապահովումը և հսկողության իրականացումը՝ վերջիններիս կողմից մատուցված ծառայության որակի նկատմամբ.

15) տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներով օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքերում, տրանսպորտային միջոցի նկատմամբ հետախուզման հայտարարումը և դադարեցումը.

16) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

34. Գլխավոր վարչության ենթակա տարածքային բաժինների գործառույթներն են՝

1) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը, խափանումը.

2) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը.

3) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության դեպքերով և դրանցով հետախուզվող անձանց հայտնաբերելու համար օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը.

4) օրենքով սահմանված դեպքերում և կարգով վարչական վարույթի հարուցումը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունների կազմումը և որոշումների կայացումը.

5) ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերումը և բացահայտումը, բռնություն գործադրած անձանց նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշումների կայացումը և կանխարգելիչ հաշվառման վերցնելը.

6) անչափահասների հանցավորության կանխարգելումը, սահմանված դեպքերում պրոֆիլակտիկ կանխարգելիչ հաշվառման վերցնելը.

7) սահմանված կարգով անձանց հաշվառումը, անհատական և ընդհանուր բնույթի կանխարգելիչ աշխատանքների իրականացումը.

8) Ֆիզիկական անձանց ծառայողական և քաղաքացիական զենք ձեռքբերելու, պահելու և կրելու թույլտվությունների տրամադրումը, զենքերի պահման պայմանների ստուգումը, ուսումնական հաստատություններին հատկացված ուսումնական զենքերի թույլտվությունների ժամկետների երկարաձգումը.

9) հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների ընդունումը, գրանցումը և դրանց հետագա ընթացքը լուծելը.

10) սահմանված կարգով ներխուժումը կանխելու և վերացնելու գործողությունների իրականացումը.

11) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմում-բողոքների քննարկումը (բացառությամբ սույն կանոնադրությամբ այլ ստորաբաժանումներին վերապահված վարույթների).

12) ձերբակալված կամ կալանավորված անձանց ՁՊՎ-ներ, քրեակատարողական հիմնարկներ, փորձաքննությունների կենտրոններ, բժշկական հաստատություններ, ինչպես նաև դատական նիստերի, ապացուցողական և վարույթային այլ գործողությունների ուղեկցումը և պահպանումը.

13) սահմանված կարգով ձերբակալված և կալանավորված անձանց ձերբակալվածներին պահելու վայրեր ընդունելը, պահելը և այլ վայրեր փոխադրելու համար պահակախմբին հանձնելը.

14) հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության այլ ստորաբաժանումների հետ համագործակցությունը.

15) հանցագործությունների և վարչական իրավախախտումների ծնող պատճառների և պայմանների վերհանումը, վերլուծությունը և դրանց վերացման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը.

16) օպերատիվ-ծառայողական գործունեության վերլուծությունը և հաշվետվությունների կազմումը.

17) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

35. Գլխավոր վարչության ենթակա գծային ստորաբաժանումների գործառույթներն են՝

1) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը, խափանումը.

2) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը.

3) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը.

4) ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության դեպքերով և դրանցով հետախուզվող անձանց հայտնաբերելու համար օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը.

5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով վարչական վարույթի հարուցումը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունների կազմումը և որոշումների կայացումը.

6) հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների ընդունումը, գրանցումը և դրանց հետագա ընթացքը լուծելը.

7) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմում-բողոքների քննարկումը, (բացառությամբ սույն կանոնադրությամբ այլ ստորաբաժանումներին վերապահված վարույթներով).

8) հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության այլ ստորաբաժանումների հետ համագործակցությունը.

9) հանցագործությունների և վարչական իրավախախտումների ծնող պատճառների և պայմանների վերհանումը, վերլուծությունը և դրանց վերացման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը.

10) օպերատիվ-ծառայողական գործունեության վերլուծությունը և հաշվետվությունների կազմումը.

11) սահմանված կարգով օդանավակայաններում ավիացիոն անվտանգության հսկողության կազմակերպումն ու իրականացումը և մետրոպոլիտենի անվտանգության ապահովումը.

12) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

36. Գլխավոր վարչության առանձին ոստիկանության կարանտին վաշտի գործառույթներն են՝

1) անասնահամաճարակների ժամանակ կարանտին հայտարարված տարածքներում և հատուկ միջոցառումներ անցկացնելիս՝ իրավասու պետական մարմիններին աջակցությունը.

2) կարանտին հայտարարված գոտում վարակի հետագա տարածումը կանխարգելելու նպատակով համալիր միջոցառումների կազմակերպումը և անցկացումը.

3) վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի կարանտին միջոցառումներ իրականացնելիս հասարակական կարգի պահպանությունը և հարակից տարածքներ վարակի հետագա տարածման կանխարգելումը.

4) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:

37. Գլխավոր վարչության հատուկ նշանակության գումարտակի գործառույթներն են՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը.

2) հասարակական վայրերում հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը, հայտնաբերումը և բացահայտումը.

3) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը զանգվածային միջոցառումների ժամանակ.

4) հանցավոր խմբերի վնասազերծումը, այդ ոլորտում այլ հատուկ ծառայությունների հետ փոխհամագործակցության ապահովումը.

5) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

38. Գլխավոր վարչության ուղեկցող սպայական վաշտի գործառույթներն են՝

1) սահմանված դեպքերում ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով իրականացվող փոխադրումների ուղեկցումը.

2) հատուկ բեռների ուղեկցումը.

3) հատուկ նշանակության տրանսպորտային միջոցների ուղեկցումը և էսկորտ ուղեկցումը.

4) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում տրանսպորտային այլ միջոցների և շարասյուների ուղեկցումը.

5) իրենց վերապահված գործառույթներն իրականացնելիս այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը.

6) իրավական ակտերով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

Ը. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

39. Գլխավոր վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության պետ, ոստիկանության պետի տեղակալը (այսուհետ՝ Ոստիկանության պետի տեղակալ), որին

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարը:

40. Գլխավոր վարչությանը պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ կարող է տալ Ոստիկանության պետը:

41. Գլխավոր վարչության ենթակա վարչությունների աշխատանքները ղեկավարում և կազմակերպում են վարչության պետերը և տեղակալները, իսկ բաժինների աշխատանքները՝ բաժինների պետերը:

42. Իր լիազորություններն իրականացնելիս Ոստիկանության պետի տեղակալը պատասխանատու և հաշվետու է միայն Ոստիկանության պետի առջև:

43. Ոստիկանության պետի տեղակալը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Գլխավոր վարչության անունից, ներկայացնում նրա շահերը.

2) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքներով, միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով.

3) հաշվետու է Ոստիկանության պետին.

4) պատասխանատու է Գլխավոր վարչության առջև դրված նպատակների, խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

5) իրականացնում է Գլխավոր վարչության գործունեության նկատմամբ անմիջական հսկողություն.

6) սահմանված կարգով Ոստիկանության պետի քննարկմանն է ներկայացնում Գլխավոր վարչության աշխատանքների կազմակերպմանը վերաբերող առաջարկներ, հրամանների և ցուցումների նախագծեր, մասնակցում է Գլխավոր վարչությանը վերաբերող հարցերի քննարկմանը.

7) մասնակցում է Գլխավոր վարչության քաղաքականության մշակմանը.

8) հաստատում է Գլխավոր վարչության պլանները և այլ փաստաթղթերը.

9) տալիս է Գլխավոր վարչության անունից հանդես գալու լիազորագրեր կամ այդ լիազորությունը վերապահում է իր տեղակալներից մեկին.

10) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է վարչության քաղաքացիական աշխատանք կատարողներին և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց.

11) Ոստիկանության պետին առաջարկություններ է ներկայացնում Գլխավոր վարչության կառուցվածքի և հաստիքացանկի վերաբերյալ.

12) պատասխանատու է Գլխավոր վարչությունում տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար.

13) պատասխանատվություն է կրում Գլխավոր վարչության գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

14) իր լիազորությունների սահմաններում ստորագրում է լոկալ և անհատական հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ, լսում Գլխավոր վարչության պետի տեղակալների հաշվետվությունները և տալիս համապատասխան գնահատական.

15) միջնորդություն է ներկայացնում Ոստիկանության պետին Գլխավոր վարչության ծառայողներին պաշտոնում նշանակելու, տեղափոխելու, պաշտոնից ազատելու, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղելու կամ ոստիկանության կոչումներ շնորհելու վերաբերյալ.

16) Գլխավոր վարչության ծառայողներին տրամադրում է արձակուրդ, գործուղում է, իր իրավասության սահմաններում խրախուսում կամ ենթարկում է կարգապահական տույժի.

17) միջոցներ է ձեռնարկում Գլխավոր վարչության ծառայողների մասնագիտական պատրաստվածության, կատարողական և ծառայողական կարգապահության բարձրացման, ծառայողական գաղտնիքի պահպանումն ապահովելու ուղղությամբ.

18) աշխատանքներ է տանում անձնակազմի համալրման, ուսուցման և դաստիարակության ուղղությամբ.

19) իրականացնում է Գլխավոր վարչության լիազորությունների կատարմանն ուղղված պարտականությունների բաշխումն իր տեղակալների և վարչության կառուցվածքային ստորաբաժանումների միջև.

20) իր իրավասության սահմաններում ստորագրում է Գլխավոր վարչությունից առաքվող (այդ թվում՝ պետական այլ մարմիններ) փաստաթղթերը.

21) Գլխավոր վարչությունը ներկայացնում է պետական մարմիններում և կազմակերպություններում.

22) բացակայության դեպքում Գլխավոր վարչությունը ղեկավարելու լիազորությունը, Ոստիկանության պետի հետ համաձայնեցնելով, հանձնարարում է իր տեղակալներից որևէ մեկին.

23) վարչական տույժ նշանակելու իրավասություն ունեցող՝ Գլխավոր վարչության ծառայողների, Գլխավոր վարչության գործունեության համակարգման ոլորտում ոստիկանության ծառայողների՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով որոշումը, ինչպես նաև վերը նշված ծառայողների գործողությունն ու անգործությունը բողոքարկվելու դեպքերում այն քննելու իրավասություն ունեցող վերադաս պաշտոնատար անձ է հանդիսանում Ոստիկանության պետի տեղակալը կամ վարչական գործունեության և բողոքների քննության վարչության պետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում վարչական բողոքների քննության բաժնի գործունեության ոլորտը համակարգող վարչության պետի տեղակալը.

24) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ։

44. Գլխավոր վարչության պետի տեղակալները՝

1) պատասխանատվություն են կրում Գլխավոր վարչությունում իրենց համակարգմանը վերապահված լիազորությունների պատշաճ իրականացման համար.

2) իրականացնում են իրենց ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը.

3) ենթակա ծառայողներին տալիս են պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ, լսում նրանց կատարողական հաշվետվությունները և զեկույցները.

4) ենթակա ծառայողներին ցուցաբերում են անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն, միջոցներ են ձեռնարկում նրանց մասնագիտական պատրաստվածության, կատարողական և ծառայողական կարգապահության բարձրացման, ինչպես նաև ծառայողական գաղտնիքի պահպանման ուղղությամբ.

5) անմիջականորեն կատարում են Ոստիկանության պետի տեղակալի հանձնարարականներն ու ցուցումները,

6) իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում են մուտքագրված փաստաթղթերի մակագրություններ՝ անմիջականորեն իրենց ենթակայության տակ գտնվող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին, Ոստիկանության պետի տեղակալի թույլտվությամբ ստորագրում են Գլխավոր վարչությունից առաքվող փաստաթղթերը.

7) Ոստիկանության պետի տեղակալին առաջարկություններ են ներկայացնում Գլխավոր վարչության գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

8) Ոստիկանության պետի տեղակալին առաջարկություններ են ներկայացնում Գլխավոր վարչության կադրերի ընտրության և համալրման վերաբերյալ.

9) Ոստիկանության պետի տեղակալին ներկայացնում են միջնորդություններ ենթակա ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական տույժի ենթարկելու, արձակուրդ տրամադրելու կամ գործուղելու վերաբերյալ.

10) իրականացնում են իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ: